ՎԱՀԱՆ ՄԱՂԱԼՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ՆՈՐ ՀԱՏՈՐԸ

Հրապարակի վրա է «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան» մատենաշարի հերթական՝ ԺԱ հատորը*, որը նվիրված է Ամենայն Հայոց 122-րդ Հայրապետի՝ Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի Քերեստեճյանին (կթղ. 1866-1882 թթ.): Այս հատորում ի մի են բերված երջանկահիշատակ կաթողիկոսի անձին ու գործին վերաբերող վավերագրերն ու փաստաթղթերը, որոնք դասավորված ու ներկայացված են գիտական պատշաճ մակարդակով:

Հատորի հիմնական բաժինը բացվում է Մ. Աբեղյանի «Գէորգ Դ Մեծագործ Կաթողիկոս Ամենայն Հայոց» վերնագրով աշխատությամբ և եզրափակվում «Արարատ» հանդեսի 1882 թ. վերջին համարից քաղված «Հանգիստ Տ.Տ. Գէորգ Դ Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսի Ամենայն Հայոց եւ Աստուածընտիր Հայրապետի Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ» մահագրությամբ:

Փաստորեն այն ժամանակ դեռ Գևորգյան Ճեմարանի ուսուցիչ, հետագայում ակադեմիկոս Մ. Աբեղյանի գրչին պատկանող հիշյալ համառոտ կենսագրականը և «Արարատ» ամսագրից վերցված մահագրականը, որոնցով բացվում և փակվում է ներկա մեծածավալ հատորը, ցայժմ մնում են գրեթե միակ ամփոփ ուսումնասիրությունները՝ նվիրված Գևորգ Դ Քերեստեճյանի կյանքին ու հոգևոր-մշակութային և եկեղեցական-հասարակական գործունեությանը: Չնայած դրանցից շուրջ երեքուկես տասնամյակ անց՝ 1933 թ. Փարիզի Նուպարյան մատենադարանի վերատեսչության ջանքերով «Վէմ» ամսագրում հրատարակվել է Վահրամ արքեպս. Մանկունու գրաբար հոդվածը՝ դարձյալ նվիրված Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցու մեծագործություններին: Նրա մասին մեկ այլ հակիրճ հոդված ժամանակին տպագրվել է «Էջմիածին» հանդեսում (1959 թ., թիվ 7), որի հեղինակն է ներկա հատորի կազմող, այն ժամանակ դեռևս Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի սան Սանդրո սարկավագ Բեհբուդյանը: Անհրաժեշտ է նշել, որ իր կոթողային «Ազգապատում» գործի երկրորդ հատորում Գևորգ Դ-ի գործունեությանը հանգամանալից անդրադարձել է նաև Մաղաքիա Պատրիարք Օրմանյանը:

Ներկա հատորի մեջ զետեղված նյութերը վերաբերում են Գևորգ Դ Հայրապետի կաթողիկոսությանը և ներկայացնում են Եկեղեցու բարեկարգմանն ու պահպանությանն ուղղված նրա ձեռնարկումները: Հատկապես նշանակալից են շինարարական, մշակութային նախաձեռնություններին վերաբերող վավերագրերը: Դրանցից իմանում ենք, որ եր-

---

* «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան». Գիրք ԺԱ. Գէորգ Դ Կոստանդնուպոլսեցի Քերեստեճեան, Կաթողիկոս Ամենայն Հայոց (1866-1882), փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, կազմեց Սանդրո Բեհբուդյանը, Երեւան, «Մուղնի» հրատ., 2004, 1024 էջ:

ջանկահիշատակ Հայոց Հայրապետն իր գահակալության առաջին իսկ օրերից նվիրվում է հայրենաշահ գործունեության: Նրա անմիջական ջանքերով հիմնադրվում է Մայր Աթոռի առաջին պաշտոնական պարբերականը՝ «Արարատ» հանդեսը, կարգավորվում են Սսի և Աղթամարի կաթողիկոսությունների հետ առկա խնդիրները, վերահաստատվում են կուսակրոն հոգևորականների ունեցվածքի ժառանգական իրավունքի հին կանոնները, իրագործվում է Օշականում Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շիրմի վրա եկեղեցու կառուցումը, բարեկարգվում են մի շարք դպրոցներ և, վերջապես, 1874 թ. հիմնադրվում է Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը, որը, փաստորեն, Ե դարում հայոց մայրաքաղաք Վաղարշապատում Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի հիմնադրած Մայր ուսումնարանի՝ ժառանգավորաց դպրոցի ավանդույթների շարունակողը եղավ նոր ժամանակներում: Մի դպրոց, որի շրջանավարտները քրիստոնեության, գիտության և հայրենասիրության լույսն առնելով իրենց ուսուցիչներից՝ տարածել են հայ ժողովրդի մեջ: Այդ դպրոցը միշտ էլ գտնվել է հայոց կաթողիկոսների ուշադրության կենտրոնում: Նրանցից մեկն էլ եղել է Գևորգ Դ Մեծագործ Հայրապետը, որի ջանքերով և հայ մեծահարուստների սիրահոժար նվիրատվությամբ վերաբացվեց հիշյալ Ճեմարանը, որը և հետագայում արժանիորեն կոչվեց հիմնադրի անունով՝ Գևորգյան: Ուսումնական այդ հաստատության շնորհիվ հայ ժողովուրդը կրկին մտավ լույսի և իմաստության ճանապարհը:

Գևորգ Դ Կաթողիկոսի ջանքերի արդյունք են նաև Էջմիածնի տպարանի հիմնադրումն ու եկեղեցական թանգարանի ստեղծումը: Նրա այս գործերը ոչ միայն Հայ Եկեղեցու, այլև նոր շրջանի հայոց պատմության կարևորագույն նվաճումներից էին, որոնք ձեռք բերվեցին տնտեսական-քաղաքական դժվարին պայմաններում: Մեծագործ Հայրապետին հաջողվում է իր գահակալության շատ կարճ միջոցում համախմբել և կենտրոնացնել հայոց տնտեսական ու հոգևոր ներուժը և լուծել ժողովրդի համար կարևորագույն նշանակություն ունեցող խնդիրներ:

Հատորում ընդգրկված փաստաթղթերն ու վավերագրերը բազմաթիվ են ու բազմազան: Դրանց մի մասը պատկանում է երջանկահիշատակ Հայրապետի գրչին, որոնք կոնդակներ, Օրհնության գրեր, որոշումներ, զեկուցագրեր, հրահանգներ, ուղերձներ ու այլ բնույթի նյութեր են: Մի զգալի մասն էլ կաթողիկոսին ուղղված նամակներ, դիմումներ, խնդրագրեր ու հեռագրեր են, որոնց հեղինակները՝ գրողներ, խմբագիրներ, հրապարակախոսներ, դրանցում արծարծում են իրենց հուզող հարցերն ու ցանկությունները: Շատ են նաև այն վավերագրերը, որոնք կաթողիկոսի և Կովկասի փոխարքայության և ռուսական կայսրության միջև կատարված գրագրություններն ու թղթակցական փոխանակություններն են: Եվ դրանք ցույց են տալիս, թե ինչ մեծ խանդավառությամբ ու ջերմությամբ են Հայոց Հայրապետին դիմավորել Ռուսաստան մտնելիս և կայսրին ներկայանալու գնալիս, հայաշատ քաղաքներում շրջագայելիս ու հանդիպումներ ունենալիս:

Քիչ չեն նաև նշանավոր հոգևորականների, մտավորականների, ազգային երևելի գործիչների, բարերարների դերն ու նշանակությունը վերհանող փաստաթղթերը, որոնցով ամբողջական պատկերացում է տրվում Գևորգ Դ Կաթողիկոսի, նրա ապրած ժամանակի ու ժամանակակիցների մասին: Հիշյալ փաստաթղթերը ներկայացնում են նաև տվյալ ժամանակաշրջանի Հայաստանի և Հայ Եկեղեցու ողջ պատկերն ու Հայրապետի գործունե-

ության ժամանակագրական ընթացքը, քանի որ դրանք գրքում ներկայացված են խիստ ժամանակագրական կարգով և գիտական պատշաճ մակարդակով:

Գրքում ժողովված նյութերը կազմում են 740 միավոր: Հատորի կազմողը դրանք ի մի է հավաքել տարբեր արխիվներից ու ժամանակի մամուլի էջերից, նշանավոր անհատների, եկեղեցական ու մշակութային գործիչների, գրողների ու գիտնականների անձնական թղթերից, որոնք պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանի և ՀՀ Ազգային արխիվի պահոցներում: Ամեն մի փաստաթղթից հետո տրված են արխիվի, ֆոնդի, ցուցակի, գործի, թղթապանակի և փաստաթղթերի անվանումն ու համարը: Բոլոր վավերագրերը վերնագրված և համարակալված են: Իսկ գիտատեղեկատու բաժինն ընդգրկում է հաշվառման ցանկերն ու անձնանունների բառարանը՝ գրքում հաճախակի հիշատակվող 60-ից ավելի նշանավոր գործիչների կենսագրություններով ու շուրջ 1000 անուններով: Հատորն ունի նաև խմբագրի ու կազմողի կողմից առաջաբաններ:

Ս. Բեհբուդյանի կազմած «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության» ինչպես ներկա, այնպես էլ նախորդ տասը ստվար հատորներն իրենց մնայուն տեղը կգտնեն մեր գիտամշակութային կյանքում: Այդ ժողովածուների պատրաստման նրա մտահղացումը ժամանակին խրախուսել է երջանկահիշատակ Վազգեն Ա Հայոց Հայրապետը, իսկ հատորների մեծ մասը տպագրվել է բարեհիշատակ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի հոգածությամբ: Ս. Բեհբուդյանի կատարած աշխատանքը բարձր է գնահատվել մամուլում և գիտական հասարակայնության կողմից: Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը նրան պարգևատրել է «Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» շքանշանով, իսկ Բնական և հասարակական գիտությունների միջազգային ակադեմիայի հայկական բաժանմունքը նրան շնորհել է պատվավոր դոկտորի գիտական աստիճան:

Սույն վավերագրերի տասնմեկ հատորներում ամբարված հարուստ նյութերը, որ ընդգրկում են XIX դ. սկզբից մինչև XX դ. կեսերի տարեգրությունը, կարող են հիմք հանդիսանալ Հայ Եկեղեցու նոր և նորագույն շրջանի պատմությունը շարադրելու համար: Դրանց միջոցով կարելի է լուսաբանել նաև բազմաթիվ անհայտ էջեր, գտնել շատ հարցերի պատասխաններ, նորովի ընկալել ու գնահատել հայոց պատմության տվյալ ժամանակահատվածը: Այդ հատորներում կուտակված են մեր գիտության, գրականության, արվեստի, հասարակական-քաղաքական ու հոգևոր շատ նշանավոր գործիչներին վերաբերող արժեքավոր փաստաթղթեր, որոնք նոր և հետաքրքիր տեղեկություններ են պարունակում նրանց մասին ու նոր լույս սփռում նրանց կյանքի ու գործունեության վրա: Ուստի, սույն մատենաշարը կնպաստի նաև գրականության, արվեստի, գիտությունների պատմության ուսումնասիրության գործին:

Հուսանք, որ եղած հատորներին կավելանան նաև Գևորգ Ե Կաթողիկոսին, Մաղաքիա Պատրիարք Օրմանյանին նվիրված հատորները, որոնք վաղուց հրատարակության է պատրաստել կյանքից անժամանակ հեռացած Ս. Բեհբուդյանը: Ինչպես ներկա, այնպես էլ նախորդ հատորների խմբագիրն է բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Ա. Մադոյանը, որի կատարած աշխատանքը նույնպես հույժ կարևոր է:

Այսպիսով, ամփոփելով ասենք, որ հրապարակի վրա է մի կոթողային ժողովածու, որը վեր է հանում Հայ Եկեղեցու պատմության մի կարևոր ժամանակահատվածը: